



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅՁԴԻ · 1865 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՑՈՒԼԻՍ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐԱՄՈՒՏ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ա. Բ. Գ. Ա. Ռ Դ. Գ. Ի. Բ. Թ. Ո. Խ. Ա. Թ. Ց. Ի.

Եթէ մոտածութիւնը բերնով բացատրելն այսինքն խօսիլն՝ աստուածաւուր և բնաձիր պարգև մը չըլլար մարդուս, անշուշտ զայն հնարող և աւանդող մարդն՝ գերազոյն մարդ պէտք էր սեպուիլ, և յամենայն ազգաց և ժամանակաց պաշտելի և պատուելի ըլլալ։ Անկէ ետև պատուելի և երախտելի համարելու է զլաօպրը մնայուն ընողը՝ նիւթական կերպով մը, որ է գիրն. և իրաւամբ այլ մեծ և աստուածական պաշտօն ընծայած են նախնիք իւրաքանչիւր ազգաց՝ իրենց մէջ զիր և զպրութիւն հնարողաց. որպիսի էր կամ կարծուի մեր հին նախնեաց մէջ՝ ջիր հայրն և աստուած զպրութեանց, որ թունաց և Եղիպտացւոց Եռամեծ Հերմեսի հաւասարի և համեմատի. իսկ քրիստոնէութեան ատեն մեր նոր զրոց հեղինակն՝ Ս. Մեսրովլպ ամենուն յայտնի

է թէ ինչպէս երախտագիտութեամբ և փառօք ճանչցուած և պաշտուած է յազգէս՝ յեկեղեցիս և յուսումնարանս։ — Եւ թէ յետ այս մեծարդիւն զրագիւտ մարդկան՝ պատույ և երախտեաց կարգը՝ մէկու մը տալու ենք, անշուշտ այն մէկն է՝ զրութիւնը շուտ և շատ ծաւալել հնարողն, որ է Ցպագիրն։ Այս այլ յայտ է, թէ Երոպացիք՝ յառաջադէմքն 'ի գրականութեան, ինչ պատիւ և շնորհակալութիւն կ'ընծայեն կուղղէմպէրկի, որ իրենց մէջ համարուի հեղինակ տպագրութեան, թէպէտ և Զինք յամենայնի հնապանձք (և շատ բանի մէջ իրաւամբ), այս զիւտս այլ իրենց սեփականնեն, բայց ընդհանուր աշխարհս չորս դար է՝ որ այս մեծ սպարզմս կուվայելէ, Սղբազպուրկի գերմանացւոց մը երկայնամիտ հանճարովը։

Մեր Հայոց կուղղէմպէրկին ով հղած

է, այսինքն առաջին անգամ հայերէն գրեր ձուլող ձևող և գիրք տպաղ, գեռուշ բոլորովին բացայաց խնդիր մ' է, զոր արդէն լաւած ես<sup>1</sup>, Հայկակ, և գիտես որ ամբողջ հայերէն գիրք տպագրելէն առաջ քանի մը եւրոպէացի բանասիրաց գրոց մէջ ժօդ դարուն կիսէն առաջ ալ երևած են հայերէն այրութենք կամ քանի մ' երես բան, որ միայն նախընծայ անհարթ փորձ, մը կրնան սեպուիլ տպագրութեան. իսկ ամբողջ տպագրեալ հայերէն գիրք մը, թուի թէ կուդգէմպէրկի գիւտէն հազիւ դար մը ետև եղած է, թէպէտ և դեռ անծանօթ է տպագրութեան տարին և տեղն և հրատարակողը : Տեսած եմ գիրք մը, որուն համար թէ և չեմ կրնար ըսել բացարձակ առաջին տպագրութեան, այլ ծանօթ տպագրութեանց նկատմամբ կրնայ ըսուիլ առաջին, կամ ամենէն հին ծանուցեալ տպագիրք, երեք դարէ աւելի հին. որոյ տպագրութեան տեղույն և անձին չյիշատակուիլն (գոնէ հիմայ գտուած օրինակաց մէջ) գուցէ խորհրդով և գուշութեամբ եղած ըլլայ. որովհետև առաջնութեան և հնութեան, նաև հրատարակման անարժան գիրք մ' է, և ձախ ձեռքի մը չօրհնած ընծայ կրնայ սեպուիլ. գիշերուան ծնունդ քան տունջեան, և եթէ ներելի է մեր հեթանոս հարց կամ Պարսից լեզուով խօսիլ, գարշ և խաւարամէր Ահրմէն մը՝ որ կ'աճապարէ՝ ի դուրս գալ նախ քան զանուշահուն և լուսաւոր Որմիզդ, որպէս զի յափշտակէ մը տաց վրայ տիրապետութիւնը. սակայն լոյսն և բարին թէ և քիչ մը յետոյ գայ՝ յաղթէ չարին և խաւարին<sup>2</sup>:

1 Բազմավէպ. 1830 ամին, երես 250:

2 Այս գիրքս է Ալմարէ կիսէն աւելին, միւս մասն Բժշկարան. թէ զարդագլուխ թէ հասարակ գրերուն ձևն, թէ ձեռքով գրուած քանի մը բաւերն՝ ցուցընեն հնութիւնը, զոր և աւելի հաստատէ անվարժ ձեռքի գրուած մ' ալ իմ օրինակիս մէջ. « ՚ի Ակնա առաջ առաջ յառաջ քան զայս տարի (1863): Գիրքն 24 (մերթ է ութածալ, 16 հարիւրորդաշտի երկայնութեամբ, և միայն թերթից թիւն ունի հայերէն այբբենով՝ և ոչ իւրաքանչիւր երեսաց. վերջին իջն վրայ տպագրած է ըստ հին եւրոպական տպագրոց Ա. Բ., և այն, մինչև 1917:

Արդ մեզի ծանօթ և հասարակօրէն հուշակեալ առաջին հայերէն լուսաշնորհ և լուսածնունդ տպագրութիւնն եղած է յամի 1565, ամբողջ երկքհարիւրամեան շրջան մ' առաջ, որով և շորորդ դարագլուխ է այս տարիս, արժանի յիշատակաց և տօնելի (գոնէ) վասն տպագրաց ազգիս, ըստ սովորութեան եւրոպեայց, որք չեն զանց առնուր իրենց պատմական, կրօնական և ուսումնական երևելի յիշատակաց դարագարձը տօնախմբել. ինչպէս այս տարի ֆլորենտիոյ, իտալիոյ և բոլոր ուսումնական աշխարհի մէջ՝ հնչեց մեծահանդէս փառք և համբաւով իտալացւոց և նոր դարուց քերդողահօր ծանդէի՝ ծննդեան 600 ամեակն կամ եօթներորդ դարամուտն :

Ելլենք ասկէ 300 տարի առաջ, մրտնենք մոզք ժօդ դարուն կէսը, քննենք զերեսս աշխարհի և զիսորս հայրենեաց մերոց. – ինչ նորութիւն և սկիզբն նորութեանց յեւրոպիա. ինչ յուզմունք, այլայլութիւնք, յեղափոխութիւնք, վէճք, քննութիւնք, ժողովք, կոփուք, միաբանութիւնք և հերձուածք՝ վասն հաւատոց, նորազանդ վարդապետութեանց, և բոլորարկու պահանջմանց : Պատմագէտ, փիլիսոփայ և աստուածագէտ պէտք է ըլլալ չափով մը, այս մեծ՝ և Եւրոպայի համար հանրական կերպարանափոխութիւնը և ծովածաւալ ծածանումը նկատելու համար. – տեսարան մը՝ որ թերևս նմանը չէ ունեցած կրթուած և զարգացած ազգաց մէջ, որոյ վերջին պատկեր կ'ըլլայ եկեղեցւոյ տիեզերական վերջին սիւնհողուր (Տրիդենտանան) :

Պահ մը դիտելով զայս, դառնանք յարևելս, 'ի մայրն արևելեայ աշխարհաց, 'ի բուն մեր հայրենիս՝ 'ի Հայաստան . . . ինչ խորութիւն խաւարի և լուութեան. ինչպէս աննշան եղեր է այն ընդարձակ բազմաբնակ աշխարհն, որ իսկզբան բոլոր երկրիս վրայ առաջին նշանն էր, և երկար և կերպակերպ յեղափոխութեամբք գրեթէ բոլոր հին և միջին ժամանակոց մէջ պատմապենու-

թեան մտադրութիւնը կրնար գրաւել, և անսկ իրեն պատերազմաց և արեանց ասպարէզ բացուած ատենն, երբ դեռ դիականց և աւերակաց մէջ ալ գտուէին և փայլէին քիչ կամ շատ կենդանի նըշ խարք Հայութեան . շունչ մը հայ հոգոյ, փայլ մը հայ հանճարոյ, գործ մը հայ ձեռին . . . իսկ հիմայ այս ( Ժ. 2 ) գարուս մէջ՝ յետ արիւնակովս աւերասփիւո արշաւանաց լէնկթիմուրի, և պատերազմաց Շահութէի, Գարա-Եռուսուֆի, Ագ և Գարա-Գօյունլու տոհմից, յետ տիրապետութեան Շահ իսմայէլի՝ ՚ի Պարս, և Օսմանեանց զօրանալով յարեմուից յարեւելս աշխարհակալելու, հիմայ՝ թէ և քիչ մը հանդարտ էր Հայոց երկիրն ՚ի վրդովմանց կուռոյ և հակառակութեան, սակայն ազգին ինքնակացութիւնն զրեթէ իսպառ ջնջած կամ ճնշուած, զանդաղամած անշարժութեան մէջ : Թերեւս Հայութեան հիգագոյն դարն է ԺԵ-Ժ. գարուց միջոցն . ոչ եկեղեցական յիշատակելի դէպք մը ( յետ փոխադրութեան կամ բաժանման կաթողիկոսական աթոռոյ ՚ի Սիս և յիշմիածին ), ոչ ազգային քաղաքական երեսոյթ մը . և ոչ այլ նշոյլք բանասիրութեան կամ գրականութեան, որ թերեւս քան զայլ նշանս՝ երկարատեւ և յայտնագոյն ցոյց է կենդանութեան մեր ազգին : Այս, մատենագրութեան մասամբ այլ, որշափ որ ծանօթ է ինձի, մեր ազքատագոյն ժամանակն է այս . յետ գեղեցիկ փորձոյ և ջանից մեր գրասիրաց ԺԳ գարուն, ( որ թերեւս հարստագոյն է քան զամենայն դարս գրականութեան մերոյ, եթէ ոչ և ընտրելագոյն որպէս իրմէ առջինը՝ ԺԲ ), դեռ ԺԴ գարուն մէջ այլ գտուէին հետեւողք նոցա, որոց գրուածքն ցուցընեն հայկական իսկութիւն մը . և դեռ ԺԵ դարն ալ մինչև ՚ի կէսն ունի քանի մը Գրիգոր և Առաքել, Թովմաս մը, Մկըրտիչ Նաղաշ մը, Ամիրտովվաթ մը, որք քիչ շատ ջանացած են առջին դարուց հայ քերդողութեան, պատմութեան և բնագիտութեան մուզոցից պարտէզները մը : իսկ

անոնցմէ ետեւ յիշեալ դարուս մէջ՝ և ոչ անոնց հաւասարող մը կ'երեսի, և ոչ հայերէն գրական լեզուի յատակութիւն, և ոչ անոր մշակութիւն գրելով ու կարգալով, որոց գիւրութիւնն ալ նուազեր էր յետ աւերմանց և աւարմանց վերոյիշեալ բռնաւորաց :

Գրեթէ նորանշան գործ մը կամ անձ մը պէտք էր այս միասը դարմանելու և մեծագոյն վնասէ պահելու զշայս . և եթէ գտուէր այսպիսի մէկն, կարծեմ անտարակոյս և անդանդաղ՝ մեզի այլ պէտք էր ճանչնալ զնա մեծ և յաւերժայիշտակ բարերար մ'ազգային . մէկ մը յայն ընտրեալ անձանց, որոց անուններն արժան է որ Հայկական երախտեաց տաճարին մէջ առաջին տողին վրայ գրուին :

Եղան, երեցաւ արդեզք այսպիսի անձ մը . պարզեցաւ Հայատանի այսպիսի այցելու մը . այնպիսի ճարտարագէտ և հանճարահնար մը, ՚ի միջոց ժամանակին որ յետ վարժապետացն Սիւնեաց վանորէից և նախ քան զՄիսիթար Սեբաստացին : — Անքան թանձր է ժամանակին մժութիւնն կամ լուութիւնն, որ այս բանս այլ ընդհատ և ընդ աղօտ կ'երեսի . սակայն հիմայ մեզի այսշափս այլ բաւական է ճանչնալու որ յիշաւի եղած է Հայոց ցանկալի այցելութիւն մը, Տպագրուքիւնն, և երեցեր է եռանդուն, հնարագէտ, անձնանուէր բարերար մը, Ա.ԲԳ.Ո.Ր ԴՊԻՐՆ : — Այս գիւտին կամ բարեաց նախաշարժ սկզբնաւորութիւնն Բնշապէս եղած ըլլան այլ մեզի դեռ յայտնի չէ, բայց խորհրդաւոր և ոչ աննշան կերպ մը կ'երեսի : Ի կէս ԺԳ գարու ( յամի 1549 ) Ստեփաննոս Սալմաստցի կաթողիկոս՝ կու գայ ՚ի Հոռովմ, ( թերեւս առաջին կաթողիկոս էջմիածնի՝ որ յետ Ս. Լուսաւորչին գայ այս կաթուղիկէ եկեղեցւոյ աթոռը . ) մեծ մտերմութիւն կու ցուցընէ և կու տեսնէ հոն, և զնոյն կու հաւաստէ իր ընտրած աթոռակցին՝ Մկքայելի, իրին ժառանգութիւն մը թողլով ասոր՝ յաջորդութեան հետ՝ զնոյն մտերմութիւն . զոր և սա կ'ուզէ արծարծել յետ տասն

և աւելի տարիներու , երբ ժամանակին զիապուածներէն ստիպուած , վաղարշապատու աթոռը թողեր , եկերնստերէր 'ի Փոքր Ասիա , 'ի Հռչակաւորն Սերաստիա . հոն , ուր իրմէ 500 տարի առաջ մեծանունն Պետրոս գետադարձն նստաւ և հանգեաւ : Քաղցր է ինձ այս քաղաքիս յիշատակն . որ հին ատեն Բ Հայոց մայրաքաղաքը ըլլալէն , և երրեմն ('ի ԺԱ. դարու) Ոստանի և վանայ տեղ Արծրունի թագաւորաց աթոռ ըլլալէն աւելի մեծ , թէ և ոչ ըստ արժանւոյն հռչակեալ՝ յիշատակներ և երախտիք ունի առ ազգս , կամ մասնաւոր նախախնամութեան ձիրքեր , զոր յարմար է հարեւանցի յիշել այս առթովս : Քրիստոնէութեան առաջին հայածանաց դարուց մէջ շատ սուրբ նահատակներ ընծայեց Սերաստիա , որոց անշուշտ մէկ մասն այլ Հայազգի էին . շատ օտար տեղացի առաքինիք այլ՝ հոս (իրեւ յիշանանիստ քաղաքը մը Հոռմայնցոց) դատուեցան և նահատակեցան : — Ո՞վ կրնայ Սերաստիոյ անուան հետ չյիշել Քսառատուն Մանկունքն , « որք 'ի Սերաստիոյ ծովուն զծովածուփ կենցաղոյս լուծին զվանգ » : Երբ հայածանքն՝ դեռ ընդհանուր եկեղեցւոյ համար չգաղրած 'ի Հայս դադրեցաւ , Գր . Լուսաւորչի մը տիեզերական նահատակութեամբ և Տրդատայ մը համաշխարհական հաւատովն 'ի Քրիստոս , մեր առաջին հայրապետն 'ի կեսարիոյ սուրբ օծութեամբ դառնալուն ատեն , « մնայր ժամանակս ինչ 'ի Սերաստիա , հաւաքել զգասս կրօնաւորացն » : Կըրնամք ըսել թէ նորընծայ քրիստոնէահաւատու Հայութեան առաջին դաստիարակաց մեծ մասն՝ 'ի Սերաստիոյ ընծայեցան . և չեմ անիրաւիր ըսելու այլ թէ թերես անկէ 1500 տարի ետև , յետին քաջանշան բարերար և նորոգիչ մը հոգեւոր և մտաւոր հանճարոյ ազգիս՝ 'ի նոյն 'ի Սերաստիոյ ծաղեցաւ , Միսիրար Արքայն : Այս Սերաստիոյ երկու մեծածիր լուսաւորիչ և լուսանորոդ հրեշտակութեանց մէջ , իրաւացի կու համարիմ դասել դհեղինակն հայ

տաղագրութեան՝ Արգար . որ թէ և հայրենեզք մերձաւոր մեծ քաղքէ մ'էր , յեւդոկիոյ (Թօքաղ) , այլ ասկէ ('ի Սերաստիոյ) ելաւ 'ի հրեշտակութիւն , և իր յիշատակաց գործը կատարեց : Եթէ եւդոկիացիք ուղեն վիճիլ այս պարծանաց համար՝ ես հաճութեամբ հաւանիմ այդպիսի վիճի մը :

Արգար դպիր՝ իր քաղաքին մէջ առաջուց այլ վկայուած էր խելօքն և ճարտարութեամբ , և անկէ այլ առաջ ազնուական ծննդեամբն . թէ և վաղուց վերցուած էր Հայոց պայազատական ցեղակարգութիւնն , բայց դեռ հիմակուընէ աւելի գտուէին և ճանչուէին հին պայազատաց շառաւեղքն . Արգարու ծնունդն մեզմէ երեք և կէս դարու չափ կը յառաջէ . իսկ անկէ վեր մինչև 'ի վերջին թագաժառանգս կիւլիկեան իշխանազանց՝ հազիւ դար և կէս է . անշուշտ այն ատեն , այսինքն 'ի կէս ժջ դարու դեռ յայտնապէս տեսնուէին մեր յետին թագաւորական հարատութեան ցրուեալ և ցանեալ շառաւեղքն , ոչ միայն 'ի կիւլիկիա , այլ թերես այլ աւելի յօտար հայաբնակ քաղաքներ . ասոնցմէ մէկն էր մեր Արգարն այլ . թէպէտ և որ ճրդէ առաջ եկած ըլլալն չէ յայտ : իր ազնիւ և տոհմիկ մարդ ըլլալն՝ արդէն վկայէր Միքայէլ կաթողիկոս իր թղթովն , բայց անկէ աւելին կու գտնեմք իր որդւոյն վրայ եղած յիշատակօքն , որ և իրեն ուղեկից և գործակից էր . և անուամբն իսկ յայտնէր մեծատոհմութիւնը , Սուրբանչան կոչուելով . զոր և լատինացիք թուփ թէ 'ի նոյն նշանակ կոչեցին Մարգանդուիոյ (Մարկոս-Անտոնիոս) . գոնէ ասոր մայրն , Արգարու կինն պէտք էր թագաւորական շառաւիղէ ըլլալ . վասն զի Մաղաքիա Դպիր ժամանակագիր կըսէ ասոր համար , « իւր (որդւոյն) թագազարմ Անտոնիոս Սուլթանշասրկաւագին » . և յամին 1583 Հունայ մէջ գտուող Հայկազունք նոյն Սուլթանշային առաջնորդութեամբ , որ իրենց իշխան կամ վերակացու անուանեալ էր 'ի Պապէն , և Յովհ . Տէրզնցի

տպագրող երիցուն ձեռնարկութեամբ՝  
առ Դաւիթ պատրիարք Երուսաղէմի  
զրած թղթերնուն մէջ՝ կ'անուանեն  
զնա «Մեր Հայոց իշխանն արքաշա-  
շիդն ՚ի Հակայ (Հայկ) պարոն Սուլ-  
տանչան » . . . և գարձեալ «արքաազնին  
պարոն Սուլտանչին » : — Քիչ տարի  
վերջ (1600) Տէր Բարթողիմէոս վար-  
դապետ մը որ հոն ՚ի Հոռմ Հայոց եկե-  
ղեցւոյն հովուապետ դրուեր էր, զինքն  
կ'անուանէ ՚ի յիշատակարանս Արքա-  
րայ ազգէն, և մեր Լսոն Ե թագաւորին  
մէկ գտուած պարզեազրին վաւերա-  
կանութիւնը վկայելով՝ կու գրէ ներ-  
քեր. «Ես Տէր Բարդողիմէոս Արքա-  
րացի, այս բագաւորին սերմանէ,  
հաստատեմ զոր գրեալ է» : — Աւելի  
որոշ կու գրէ ուրիշ ժամանակադիր մը  
անցեալ գարուն, նոր անուն մ'այլ յայտ-  
նելով Արքարու. «Պարոն Սէֆէր Ար-  
քարենց, ՚ի զարմէ թագաւորացն Հայ-  
ոց, եկեալ ՚ի Հոռմ գեսապան Հայա-  
ստանեայց», և այլն: Արդ ասոնք կար-  
ծեմ բաւական ցուցընեն թէ Կիւլիկիոյ  
Ռուբինեան թագաւորաց ցեղէն իջած  
էր Արքարեան տոհմը, ուսկից էր մեր  
Դավիրն, և Սուլմանչահ և Տէր Բարդո-  
ղիմէոսն. իսկ ՚ի Հայկայ անուանեն ըլ-  
պայազատն՝ գուցէ ամէն հայ թագա-  
ւոր Հայկայ յաջորդ սեպուելովնէ: — Ե-  
թէ ցեղին ազնուականութիւնն աւե-  
լորդ է, կամ մասնաւոր փառք մը չա-  
ւելցըներ բարբով աննշան մարդու մը,  
արդէն գործովը նշանաւոր եղողին կըր-  
նայ նոր և աւելի փայլք տալ. ուրեմն  
թէ ասոր համար հարկ էր մեզի զայս  
զիսնալ, թէ մեր ազգային պատմու-  
թեանց տեղեկութեան համար: Գանք  
հիմայ Արքարու ուրիշ առաւելովթեանց  
վրայ:

Ինքն զինքն Դավիր կ'անուանէ, որ  
թէ եկեղեցական կարգի փոքր աստի-  
ճաններ ունենալն կընայ յայտնել, և  
թէ զրոց և զրութեան աշակերտին.   
բայց կ'երևի թէ աւելի ճարտարութեան  
արուեստից ետևէ էր՝ քան պարզ գրա-  
կանութեան. սակայն յամենայնի ճար-  
տար ճարպիկ մարդ մը ճանաչուած: Ար-

գարու յաջողութեանց ինքնին վկայ է  
Միքայէլ կաթուղիկոս առ Պիտո Դ գրած  
թղթերովն, որոց մէկն միայն լատինա-  
րէն հասած է մեր ձեռքը. յետ հաս-  
տատելու իր նուիրակին պատուաւոր  
և պատուարժան անձն ըլլալը, կ'իմա-  
ցընէ նաև անոր կերպ կերպ ճարտարու-  
թիւններն այլ. և նախ հնարագիտու-  
թիւնն ՚ի գրել, և կարդալ ծածուկ և  
խորհրդաբար զրուածներ, ինչպէս էր  
ինքնին կաթուղիկոսին առջի գրածն այլ  
և ուրիշ գրելիքն այլ, զոր բաց յԱրգա-  
րու չէր կրնար ուրիշ մը կարդալ: Դար-  
ձեալ կ'իմացընէ՝ որ յերկուց ձեռաց  
այլ հաւասար յաջող էր Արգար, ինչ  
որ աջովը կրնար՝ զնոյն նաև ձախովն  
կարող էր ընելու: Ուրիշ աւելի բար-  
ձրագոյն յաջողութեան և ճարտարու-  
թեան մ'այլ վկայէ կաթուղիկոսն, որ  
ինձմէ այլ բարձր կամ անհասկանալի  
մնայ առ ժամն<sup>1</sup>: Այս թուղթս գրած  
է Միքայէլ կաթուղիկոս յամին 1563,  
(ապրիլ 4) յիշեցընելու և ստուգելու  
համար որ անկէ առաջ նախընթաց  
տարին (1562 մայիսի 20) երկու եր-  
կար գիր գրեր և յանձներ էր առ Ար-  
գար, գլուխ գնելով զնա իր պատգա-  
մաւորաց առ Ս. Փատին. մէկ թուղթն  
ընծայական կամ յանձնարարականն  
էր նոյն Արքարու համար առ Պատին,  
որոյ ձեռքով ընծայ խաւրէր առ քա-  
հանայապետն օրհնեալ մեռոն անուշա-  
հոտ, թանկ խաչ մը և նշխարք սրբոց.  
իսկ միւս թուղթն որ բուն այս գետպա-  
նութեան նպատակն պիտի յայտնէր,  
զեռ յերեան չէ ելած. բայց անտարա-  
կոյս է որ մնասամբ հաւաստոյ դաւանու-  
թեան և միաբանութեան վրայօք էր. և  
մնասամբ (որ առ այժմ հոս մեզի աւելի  
հետաքննելի է) թուի թէ այն գործոյն  
համար էր, որոյ ձեռք զարկաւ Արգար,  
և որոյ համար այսօր այլ մեզմէ կու  
հոչակուի:

Արդ այս թղթերով և ընծաներով,  
հետն առած իր Սուլդանչահ որդին, Ա-

<sup>1</sup>Այսպէս Կըսէ ՚ի լստիներէն Թղթին. Scit superiora elementa prisca, nisi tantum ipse, qui ea etiam docebit.

ղեքսանդր անուամբ քահանայ մը, և թերես ուրիշ անձեր այլ, ելաւ Արգար 'ի Սեբաստիոյ երթալ 'ի Հռոմ. ուր շատ ուշ հասաւ, յամին 1564. որ թուի թէ ոչ միայն ճամբու արգելանաց համար ըլլայ, որովհետեւ կաթուղիկոսը լուր և պատասխանի շառնլով՝ վերոյիշեալ գիրն այլ գրեր և հասուցեր էր առ Պատն (1563). այլ գուցէ Արգար լսեր էր Սրբազնին մեծ և կարեսոր զբաղանքն, որ ամենայն ջանքով և շուտով յառաջ տանելով կ'ուզէր կնքել Տրիդենտեան յերկարեալ ժողովը, ինչպէս որ յաջողեցաւ այլ ընելու, և մեծ գոհութեամբ հանգչելով յաթուն սուրբ կ'ըսէր, Արդ արձակեա Տէր զծառայս քո: բայց գործ մ' այլ կայ եղեր իրեն տեսնելու՝ մեր հայրենեաց նկատմամբ. և այս էր գործն Արգարու: Հասաւ սա 'ի Հռովմ' յամին 1564, և մատոյց առ Պիոս Դ բերած թղթերն և ընծայքն, և իմացաւ որ կաթողիկոսն նոր թուղթ այլ գրեր է, յորում դարձեալ կ'աղաչէ զԱ. Պատն՝ որ մեծարանօք ընդունի զԱրգար և դեսպանօրէն պատուէ զնա, ցուցընել տալով անոր՝ ինչ որ սրբութեանց և արուեստից հրաշալի տեսնելիք կան 'ի Հռովմ', և յետոյ պապական թղթով և նուիրակով յետ դարձնէ: Անշուշտ այս խնդիրքս գոհարար կերպով կատարեցան: Պիոս հաճութեամբ ընդունելով Միքայելի առաջին թուղթն, և իրեն յաւելուած մը սեպելով իր եկեղեցւոյ պայծառութեան աշխատանաց և փափագին, աւելի երկար և պարզ գաւանութիւն մ'ուղեց յԱրգարայ՝ Հայոց եկեղեցւոյն վարդապետութեան վրայօք. զոր և կատարեց Արգար իր ճանցածը բացատրելով չափաւորապէս. այս բանիս համար անկէ ետև եղածը թողունք պրապտել մեզ եկեղեցական պատմութեան, որ մուլթ մնացած է այս տեղ. բայց այսչափս հարկ է ըսել, որ տարւոյ շափ Արգարու մնալովն 'ի Հռովմ' երկու կողմանէ այլ քննութիւն և հաւանութիւն եղած պիտի ըլլայ. որովհետեւ Արգար ընտանութեամբ խնդիրքներ ըրած և առած է 'ի Պապէն, ինչպէս ինք.

նին նշան կու տայ իր առաջին տպած գրոց մէջ. և զի իր Գրամիու որդիին, ինչպէս ինքն կ'անուանէ, հոն թողուց որ սովորի լաւ խտալ և լատին լեզու, և որ 20 տարի վերջն այլ յիշուի հոն 'ի Հռոմ. ուր և արդէն հոն գտուած Հայոց վերակացու և իշխան զրուեցաւ 'ի յաջորդաց Պիոսի ( $\dagger$  1565), ընդունելով ազգին համար սեփական հիւրատուն մը, և եկեղեցի մը՝ Ս. Մարիամ Եգիպտացոյ, փոխանակ հին տան և եկեղեցւոյն (Ս. Աստուածածին և Ս. Լուսաւորիչ) որ մեզմէ վեց գար այլ յառաջ յիշուին 'ի Հռովմ' մօտ 'ի մեծն եկեղեցեաց 'ի Ս. Պետրոս:

Հոգեւորական գործը լմբնցընելով, կամ անոր հետ մէկտեղ սկսաւ Արգար իր մեծահոչակ ուսումնական գործը, այսինքն է հայերէն տապագրութիւնը: Այս լուսաւոր ծննդեան երկունքն կամ խորհրդածութիւնն՝ արդեօք Արգար իր հայրենի երկրէն և կաթողիկոսին հաւանութեամբ հետը բերեր էր, թէ 'ի Հռոմ գալով միտքն արծարծեցաւ, մեզի յայտնի ըսած չէ. բայց ինչպէս առաջ այլ ըսի՝ կ'երեսի թէ արդէն այս փափագովս եկած էր Արգար 'ի Հռովմ', և թերեւս կաթողիկոսին մթին խօսքերն ասոր այլ ակնարկեն: իսկ այս ամենայայտնի է որ ծանօթ հայ տապագրութեան երկունքն եղաւ 'ի Հռովմ', ծնունդն 'ի Վենետիկ: Հայն իր լուսաւոր կենաց նախնական և զվսաւոր օժանդակները՝ միշտ մեծ և հրաշալի կերպով մ'ընդունած կարծէ և պարծի. այսպէս՝ սուրբ հաւատքը, տումարը և զիրը. այսպէս այլ իր տպագրութիւնն նախախնամական և սրբազն կերպարանք մը կ'առնու Արգարու ձեռքով կամ ճարտարութեամբ. որ յիրաւի արժանի է մուզութեան անոնց՝ որ պատմութեան, և մանաւանդ մնաւոր պատմութեան մէջ՝ աստուածային աջը տեսնեն նախացուցակ: կարդա մեր առաջին ծանօթ տպագրեալ գրոց (Սաղմոսին) առաջին յիշատակը. «ի թվականիս Հայոց Ռժ Ռժի (1565) ամին ես թոփաթցի Արգար Դպիրու, իննդրեցի զայս ևոր

» գիրս՝ ՚ի Հռոմ՝ ՚ի Պետրոս (Պիոս) փա-  
» փուն . և երետ հրաման շինելու . բա-  
» րեխսաւսութեամբ այս կարտինալացս  
» և այս եպիսկոպոսիս . և իմ գրայմիտ  
» Սուլտանչա որդուցս» : Յիշած կարտի-  
» նալներն են երեք , և եպիսկոպոս մը , որոց  
կերպարանքն և անունն ձեացուցեր է  
փորագրեալ փոքր պատկերի մը մէջ զըր-  
քին մէկ կէս երեսին վրայ , որոյ տակն  
այլ տպագրած է յիշատակարանը . պատ-  
կերին մէջ տեղը բազմեցնելով զՊիոս Դ  
եռակարգեան խուրովը . ՚ի ձախ ձեռքը  
Պետրոսեան բանալիքն , ածովն այլ օրհ-  
նելով նորընծայ հայ զրերը՝ զոր Արքար  
՚ի ծունկ իջած ներկայացընէ Պապին ,  
և որդին Սուլտանչա յուաք կեցած իրրե  
հօրը թարգման՝ խնդրէ օրհնութիւն և  
հրաման մտցընելու և ծաւալելու՝ ՚ի Հայս՝  
այս մտարացութեան կարևոր հնարքը :  
Այն կէս թաթաշափ փոքրիկ , խոչորա-  
գիծ պատկերին մէջ այնչափ բան և ի-  
մաստ բովանդակեն՝ յիրաւի ցուցընէ  
Արքարու զովեալ հնարագիտութիւնը  
և մեծցընող ու փառաւորող ձեռքն ու  
միտքն . . . ինչո՞ւ չըսենք թէ նաև սիրտն ու  
հոգին : Պատկերին ցուցած եօթն ան-  
ձանց մէջ՝ յետ Արքարու և որդուցն՝  
մեզի և հասարակաց համար նշանաւոր  
անձն՝ ՚ի հարկէ հոն բազմեալն և զըլ-  
խաւորն եկեղեցւոյ՝ Պիոսն է , որ իր կե-  
նաց և շատոնց բազձալի ու մեծ ու զժար  
գործը գեռ նոր վճարած (Տրիդ . ժո-  
ղովը) , և իր անմահութեան յիշատակին  
նախափայլ ճառագայթներով՝ մնացած  
քանի մամանական կենաց նշոյլը ծած-  
կելու միջոցին մէջ՝ այս մեր հայերէն  
տպագրութեան սկզբնաւորութիւնը օր-  
հնելով կամ սրբազնելով՝ յիրաւի  
կ'առնու և կու տայ վսեմական կերպ  
և իմաստ մը : Ոչ պակաս վեհ և աւելի  
սիրելի է հասարակաց՝ մէկ ուրիշ անձ  
մայլ՝ կարտինալական ձեռքն անմիջա-  
պէս Պապին քովն կեցած . որ և նոյն  
խակ սրբազնին քեռորդին էր , գեռ  
ան ատեն 26 տարուան , բայց արդէն  
արքեպ . Միլանու և ծիրանաւոր պալա-  
տան Հռոմայ , ազնուականն ծննդեամբ  
և ազնուագոյնն մահուամբ Ա . կայուղու

Պորրումես . որ թերեւս սրբութեանը  
պէս՝ բազմակերպ մարդասէր բարերա-  
րութեամբքն ծանօթ և հոչակեալ է  
ընդ ամենայն իտալիա և բոլոր բարե-  
պաշտ Եւրոպէ : Այսպիսի անձի մը՝  
մեր հայերէն տպագրութեան իրքն  
պաշտպան կամ ընթերակայ գտուիլն ,  
կու յիշեցընէ՝ ինչպէս ինծի՝ անշուշտ  
քեզ այլ , Հայկակ , Խօսնակին եկեղե-  
ցւոց կամ անորնման անձի մը յիշատա-  
կը՝ մեր հայերէն գրոց կամ թարգմա-  
նութեան գիտին նկատմամբ : ի մեծ  
գրատան Միլանու կայ օրինակ մը մեր  
տպագրոց անդրանկին՝ Արքարու սաղ-  
մուին , որ և միայն հոն գտուի (ըստ  
իմ գիտութեանս) . և այն օրինակն է՝  
զոր անշուշտ մեր Արքարն ընծայեր է  
առ սուրբ Ծիրանաւորն , և նա այլ թո-  
ղեր է գրատանն . եռապատիկ ցանկալի  
յիշատակ և գրքոյկ մը , որ կրնայ կեն-  
դանի արձան մը սեպուիլ այս ըսածնե-  
րուս արքարեան նորընծայ տպագրու-  
թեան վրայօք , և պաշտելի նշխար մը  
այն գործոյն , զոր ոչ միայն Արքար՝  
այլ և նախախնամութիւնն , հոս պէտք  
է զայս խոստովանիլ , արդարե կեր-  
պով մը սրբազնել ուզեր են :

Արքար այսափով գոհ շրլալով՝ կ'ու-  
զէ աւելի փառաւորութիւն մայլ ըն-  
ծայել իր հայկական տպագրութեան  
ծագման . ոչ միայն եկեղեցական այլ և  
քաղաքական հովանաւորութիւն մը կու  
ձգէ վրան . ժամանակին նշանաւոր և  
յարեւլս ծանօթագոյն եղած տէրու-  
թեան մը պաշտպանութեան տակ , վե-  
նետիկոյ հասարակապետութեան : Վե-  
րոյիշեալ պատկերին դիմաց՝ և նոյնչա-  
փով՝ կու ներկայացընէ ուրիշ մը . հան-  
գիսական դահլիճ մը , վենետիկոյ պաշտ-  
պան և նշան Ս . Մարկոսեան ուկեթեւ  
առիւմն վերակարգեալ ՚ի վերայ ար-  
քունի գահուն , ուր բազմի այն ատե-  
նուան գուգուն Հերոնիմոս՝ իր հանդիսի  
հագուստովն . երկու կողմն իրեք իրեք ա-  
տենակալ նստին իրենց լայն լոգիկնե-  
րով պատած , որպէս թէ կարևոր խնդիր  
մը ընեն նաւախումբ մը արձըկելու և ի-  
րենց առիւծագութ գրօշները թոցըեղ

լու Յոնիականի կամ՝ Աղբիականի կըղզւոյ մը վրայ . . . բայց մեր ճարտարագիւան Արգար՝ անոնց մտադրութիւնը կու դարձընէ իր նորաձոյլ հայկական տառից վրայ : — կու ներկայանայ դա, հուն աստիճանաց վրայ, ինքն այլ իր լայն վերարկուաւն, զնոյն խնդիրն ընելով ինչ որ ըրաւ Պապին. ծերունի և մօրուանի ատենակալաց և զբսին ծովային աչքերն՝ սուր սուր կու սևուին Արգարէն աւելի (որոյ ազգն և ձևն շատոնց իրենց ծանօթ են), անոր ցուցած և անծանօթ գծած ձևերուն վրայ, և թերևս կարծեն թէ անոնք նոր մողական բանալիք մ' այլ ըլլան իրենց՝ արելքի ճամբաներն աւելի բանալու : Այս պատկերին ներքեւ կու գրէ Արգար. « Եւ եկեալ 'ի գեղեցիկ նաւայ » Հանկի(ս)տ մայրաքաղաքն, որ կոչի « Վանատիկ, 'ի թագաւորութեանն Երելեմոն թուճին : Եւ շինեցաք զայս « նոր գիրս, և զաս փոքր Մեկնիչս սաղ « մոսացս » : Հոս այլ տարւոյն թուականն նշանակելով զբսին պատուանդանին վրայ, այսպէս Ա. Դ. Լ. Խ. Վ. որ է 1565 : — Ասով յայտնի կ'ընէ Արգար, որ 'ի Հռոմ երկնեալ հայկական տառերը ձուլեց ծնաւ 'ի վենետիկ . և մէկէն ձեռք զարկաւ անոնց նախընծայ զուգաւորութեամբ բազմացընելու այն գիրքը՝ որ և կ'ըսուի թէ նախ քան զայլ սուրբ Գիրս հայերէն թարգմանուած է, Սաղմուն . զոր թերևս վերնազրացը համար՝ Մեկնիչս ասդմոսաց կ'անուանէ :

Ցետ այս անդրանիկ տպագրութեան ուրիշ գրոց ծնունդք այլ եղան 'ի վենետիկ, չեմ գիտեր. հաւանական է որ Արգար ուրախութեամբ լցուած իր փորձին և յաջողութեանն վրայ, իրը յաղթանակաւ և աւարաւ նաւեց փութացաւ 'ի մեծ քաղաքն (Կ. Պօլիս), որ այն ատենէն մինչեւ հիմայ ազգերնուս մեծագոյն բարգաւաճանաց ժողովարանն և կեդրոնն եղած է . ուր և բոլոր Օսմանեան տէրութեան մէջ ազգը ներկայացընող ճանչցուէր, հիմկու պէս, Պատրիարքն Հայոց : Ասոր այլ ներկայացոյց Արգար, յառաջ քան թէ կա-

թուղիկոսին, իր գիւտը և անոր երախայրիքը . և շուտով տպագրատուն մը հաստատելով, և անշուշտ առաջին տրպագրատուն կոստանդիանու և Օսմանեան տիեզերական մայրաքաղաքին մէջ տպագրեց, յամի 1567, գրականութեան առաջին հարկաւոր գիրքը, Քերականուր կուրքին . որոյ համար կ'ըսէ մեր յետին գարուց ժամանակագիրն (Մաղաքիա) այլ մեծարանութեամբ և այլարանութեամբ . « 'ի հայրապետութեանն » Հայոց տէր Միքայելի իլ. ամի կա » թուղիկոսութեանն, 'ի մայրաքաղաքն » կոստանդնուպոլիս . յերկրորդ ամի » թագաւորութեանն Օսմանցւոց սուլ » թան Ալիմի . և 'ի չորրորդ ամի պատ » րիարգութեան տէր Յակոբ Բարու » նապետի կոստանդնուպոլսոյ, առ ոտո » Յովանէս Եպիսկոպոսին, ընդ Հովա » նեաւ սուրբ Նիկողայոս Եկեղեցւոյն » Հայոց, եղեւ ստամիհայ, այսինքն պաս » մայ գիր . և տպեցաւ փոքր քերա » կանուր տղայոց, ձեռամբ անար » ժան կնքագիր գալրի և մերս Յովթո » րին » : Հոս բնիկ անունը լուելով կլնքագիր դպիր կ'անուանէ զԱրգար, գուցէ այսպէս կոչելով մեր հիմայ տրպագիր ըսածը . իսկ Յովթոր անուամբ, որ Մովսէս մարգարէին աներոջ անունն է, կ'ուզէ նշանակել, թէ անոր պէս այլ Արգար ճամբայ ցըցուց իր ազգին գըլիաւորին՝ զազգը գիւրաւ կառավարելու կամ դատելու : — Բայց հետեւալ տարին՝ աւելի պարզ և յայտնի կու խօսի տարէգիրն . « Ո. Ժ. (1568-9) 'ի » կոստանդնուպոլիս նոր ստամփայ գիր » սահմաննեցին, 'ի հայրապետութեան » տեառն Միքայէլին Լջմիածնի, և 'ի » պատրիարգութեան կոստանդնուպոլ » սոյտէր Յակոբին, ընդ Հովանեսաւ սուրբ » Նիկողայոս Եկեղեցւոյն . ձեռամբ Խոր » Վիրապցի Առաքել Արեղային, արհետ » տագործութեամբ Արգար դպիրին, և » իւր Անտոնինոս Սուլթանշա սարկա » ւագին, որոյ գրովքն տպեալ Տօնա » ցոյցս յառաջ բերին » : Այս տօնացոյցս ես չեմ տեսեր, բայց ձեռքս հասեր են անոր ընկերակից և ժամանա-

կակից ուրիշ եկեղեցական գրքեր, մասսամբք, այսինքն Ժամագիրք, Պատարագամատոյց, Մաշտոց. որոց սկիզբն և վերջն պակսի, բայց գիշերային ժամու վերնագրէն յառաջ երեսի մը սկիզբը յայտնապէս կայ (տպա) « գրեցաւ Աղաւթ մատուցս թվին . Ոժէ ապրիլ. իլ » որ է 1569ին ապրիլը :

Սաղմոս, Տօնացոյց, Ժամագիրք, Պատարագամատոյց, Մաշտոց, կու պահանջեն զԱւետարանն այլ, որոյ անդրանիկ արգարեան տպագրութիւն դեռ յայտնուած կամ յիշուած չէ, բայց դրեթէ անտարակոյս կ'երեսի, լեցընելու եկեղեցական գրոց առաջին դասը : Քերականութիւնն այլ հիմն և սկիզբն կ'ըլլայ մեր նախնեաց խրատական և դիտնական գրոց, միանգամայն և զըլլոցական գրոց . որոց կարգը կամ ծնունդը փնտուել, թէ դժար և թէ աւելորդ կու սեպեմ հոս . բաւական ըլլայ քեզ, չայկակ, ճանչնալն զԱրգար՝ ինչպէս հեղինակ հայերէն տպագրութեան, նոյնպէս այլ սկզբնաւոր հրատարակման թէ հոգեսոր թէ մտաւոր գրոց մերոց : Եւ այսչափս, որ թերես Արգարու վաստակոց մէկ փոքր մասն է, շատ ըլլայ մեզի իր մեծ մտածութիւնը, աշխատանքը, ջանքը, փորձը և յաջողութիւնը յաղթող և փառաւոր ցուցընելու . և եթէ մեր նախ յիշեալ մթին ժամանակաց լրութիւնն կու ծածկէ մեզմէ իր վաստակոց ուրիշ մեծ կամ փոքր մասերն այլ, կամ իր ծովայածուկ և նոր կղզի գտնող նաւորդի մը պէս յաղթողակերպ դարձն յետ բազմամեայ պանդխտութեանն՝ առ կաթուղիկոսն Միքայէլ և 'ի հայրենիս իւր, — կամ իր վերջին կենաց դիպուածքը, (որոյ առաջինէն՝ կամ բոլորէն այլ հազիւ վեց կամ եօթն տարւոյ յիշատակ միայն աւանդեր է, (գոնէ իմ հիմայ գտածս), — այսչափս, կ'ըսեմ, առ այժմ բաւական սեպեմք ճանաչելու և ճանաչեցընելու զԱրգար դպիրն մեր ազգային բարերարաց և մեծագործաց և մեծ չնորհակալեաց արժանաւորաց՝ մէկ մը : Թողունիք հիմայ մեր բաղմացեալ տպագրու

ղաց և տպագրապետաց մտաց և սրախն զգացման՝ հոչակելու գյիշատակ իրենց առաջնորդին, 'ի Չորրորդ դարամտի տպագրութեանն Հայոց . մեր կողմէն փափագելով որ այսպիսի ջանքով, հանդիսաւորութեամբ և սրբազնութեամբ մը սկսեալ կամ չնորհեալ արուեստն՝ առ ազգս մեր, հիմայ յաճախութեամբ գրոց և տառից և մամլոց՝ շանարգուի խորթ ծննդեամբք, այսինքն հրատարակութեամբ այնպիսի գրուածոց, որ կրնան քճքճել և փճացընել աշխարհքիս հնագոյն ազգի մը պատկառելի նահապետական պատուոյ քօղը, որ և ազգիս պանծալի և ազնուագոյն մնացեալ չնորհաց մէկն է . զոր եթէ մեր հնութեան դանդաղ գրիչքն՝ բաւական չփայլեցուցին, 'ի փառս մեր և աշխարհի, կրնան հիմայ շուտաշարժ անզգաստ գրիչք փոխել 'ի նախատինս մեր, և նախ՝ իրենց . և 'ի յանդիմանութիւն յետագայ ժամանակին . այն՝ որ թերես աւելի հանդարտ և զգօն պիտի ըլլայ և ամացէ ու անարգէ այդ կրից, տգիտութեան և անկրօնութեան տհաս և տտիպ ձարուտեալ ծնունդքը . որոց վրայ թերես արդէն քանի մը տպագլուխ ծնողք այլ զղացած ըլլան, և աւաղելով կրոկնած ծանօթ առածը, թէ

Զեռլս զնայ, գիրլս մնայ :

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

Ճանանորսակ բոյս .

Հոլանտա պտըտող վերջի Գաղղիացի ճանապարհորդներեն մեկը կը պատմէ, որ շատ տուներ իրենց պատուհաններուն ներսի դիեն յախճապակի անօթներ ունին, մէջը ապոկիուն<sup>1</sup> ըսուած բոյսը տնկած : Այն տուները որ այս բոյսը կը պահեն, ամենեին աղատ կ'ըլլան ճանճէ :

1 Գ. Ալեք-Թուշե.